ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐ ԸՆՏՐԵԼՈՒ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Գեղարքունիքի մարզի Սևանի և Ճամբարակ տարածաշրջաններ)

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը հայտարարում է ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպության ընտրության մրցույթ՝ հետևյալ ավտոբուսային երթուղիների համար.

Հ/Հ	ԵՐԹՈՒՂՈՒ			
	անվանումը և համարը	սկզբնակետը	վերջնակետը	սպասարկման համար պահանջվող հիմնական և պահուստային ավտոբուսների քանակը
	Գեղարքունիքի մարզի Սևանի և Ճամբարակի տարածաշրջանների միասնական երթուղիներ, որոնք ներառում են միջմարզային, ներմարզային և ներհամայնքային երթուղիներ			Ընդհամենը՝ 31 հիմնական, 5 պահուստային
1	ՍԵՎԱՆ-ԵՐԵՎԱՆ	Սևան	Երևան	12
2	ՍԵՎԱՆ-ՀՐԱԶԴԱՆ	Սևան	Հրազդան	2
3	ՍԵՎԱՆ-ԳԱՎԱՌ	Սևան	Գավառ	1
4	ՍԵՎԱՆ-ԳԱԳԱՐԻՆ	Սևան	գ.Գագարին	1
5	ՍԵՎԱՆ-ԶՈՎԱԲԵՐ	Սևան	գ.Զովաբեր	2
6	ՍԵՎԱՆ-ՍԵՄՅՈՆՈՎԿԱ	Սևան	գ. Սեմյոնովկա	1
7	ՍԵՎԱՆ-ՎԱՐՍԵՐ	Սևան	Վարսեր	1
8	ՍԵՎԱՆ-ԳԵՂԱՄԱՎԱՆ	Սևան	Գեղամավան	1
9	ՍԵՎԱՆ-ՍԵՎԱՆԻ ԹԵՐԱԿՂԶԻ	Սևան	Սևանի թերակղզի	1
10	ՍԵՎԱՆ - ՆՈՐԱՇԵՆ	Սևան	գ. Նորաշեն	1
11	ՍԵՎԱՆ-ԼՃԱՇԵՆ	Սևան	գ. Լճաշեն	2
12	ՃԱՄԲԱՐԱԿ-ԵՐԵՎԱՆ	Ճամբարակ	Երևան	3
13	ՃԱՄՄԲԱՐԱԿ-ԱՆՏԱՌԱՄԵՋ	Ճամբարակ	գ. Անտառամեջ	1
14	ՃԱՄԲԱՐԱԿ-ԾԱՓԱԹԱՂ	Ճամբարակ	Ծափաթաղ	1
15	ՃԱՄԲԱՐԱԿ-ՎԱՀԱՆ	Ճամբարակ	Վահան	1

Ց Ա Ն Կ

ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ

1. Հայտ՝ N 2 ձևի:
2.* Ավտոբուսների գրանցման վկայագրեր (ժամանակավոր կտրոն):

3.*Ավտոբուսի նկատմամբ սեփականության կամ օգտագործման իրավունքի առկայությունը հավաստող փաստաթուղթ:
4.* Ավտոբուսն այլ տեսակի վառելիքով շահագործելու համար վերասարքավորելու (կահավորելու) դեպքում՝ շահագործման և վերասարքավորման օրինականությունը հաստատող փաստաթուղթ:
5. Հավաքակայանի սեփականության կամ օգտագործման իրավունքը հավաստող փաստաթղթեր, գիշերակացով երթուղիների դեպքում վերջնակետում ավտոբուսների կայանումը, պահպանումը, նախաուղերթային տեխնիկական զննումը և վարորդների բուժզննումն ապահովելու նպատակով կնքված պայմանագրեր:
6. Ավտոկայարանային ծառայություն մատուցող կազմակերպության հետ կնքված սպասարկման նախնական, իսկ ներհամայնքային փոխադրումների դեպքում երթակարգավարական ծառայություններ մատուցող կազմակերպության հետ կնքված ծառայություններ մատուցելու նախնական պայմանագիր (գործող պայմանագրի առկայության դեպքում նախնական պայմանագիր չի պահանջվում):
7. Փակ ծրարով ներկայացնում է երթուղու սպասարկման համար առաջարկվող մեկ ուղևոր և ուղեբեռ (եթե սահմանված է) փոխադրավարձը, իսկ միջմարզային և ներմարզային երթուղիների համար՝ նաև ըստ նախատեսված միջանկյալ կանգառների (սույն պահանջը չի վերաբերում համայնքներում անցկացվող մրցույթներին):

Նշված փաստաթղթերի պատճենները ներկայացվում են մեկ օրինակից, կազմակերպության կողմից սոսնձված և ստորագրված փաթեթով:

Փաթեթների բացման օրը, ժամը և վայրը՝ 2025 թվականի նոյեմբերի 18-ին, ժամը 12:00 հետևյալ հասցեով՝ ք. Երևան, Կառավարական տուն 3, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:

Մրցույթի անցկացման օրը, ժամը և վայրը՝ 2025 թվականի նոյեմբերի 24-ին, ժամը՝ 14:00, գ. Վերին Պտղնի, Երևան-Սևան ավտոմայրուղի, 2/14 շենք:

Հայտը ներկայացնելու օրը, ժամը, վայրը և վերջնաժամկետը՝ հայտերը պետք է ներկայացվեն մինչև 2025 թվականի նոյեմբերի 17-ին 17:00 հետևյալ հասցեով՝ ք Երևան, Կառավարական տուն 3, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:

Հեռախոսահամարը՝ լրացուցիչ տեղեկություն ստանալու համար՝ 010 511 356:

***Չի ներկայացվում հայտ-պարտավորագիր ներկայացնելու դեպքում:**

Էլեկտրոնային փոստի հասցեն՝ mtai.secretariat@gmail.com

Երթուղիների չվացուցակները ներկայացված են հետևյալ հղումով՝ https://www.mtad.am/pages/timetables?file=panel7151

Մրցույթին ներկայացվող ավտոբուսների ընդհանուր թվի առնվազն 10%-ը պետք է հարմարեցված լինի հաշմանդամների (տեղաշարժվելու, տեսողության և լսողության խնդիրներ ունեցող անձանց) նստեցման և իջեցման համար:

Մրցույթը անցկացվում է ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի թիվ 1994-Ն որոշմամբ հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) պահանջների համաձայն:

Հայտ-պարտավորագրով մասնակցելու դեպքում Կարգի 22.1 կետի պահանջներին համապատասխան մրցույթին մասնակցելու ցանկություն ունեցող կազմակերպությունները կամ անհատ ձեռնարկատերերը պետք է ստորև նշված հաշվեհամարին մինչև 2025 թվականի նոյեմբերի 23-ը ժամը 12:00 փոխանցեն սահմանված քանակով ավտոբուսների ընդհանուր արժեքի 2.5 տոկոսին համարժեք գումար՝

Հ/Հ 900008000730